

Մաթեմատիկայի ստուգատեսին 3-րդ կանգառ՝ կշռում

Մայիսի 30-ին ընկեր Գրետայի և միջին դպրոցի սովորողների հետ կատարեցինք ստուգատեսի փուլերից մեկը՝ կշռումը: Ես կանգնեցի կշեռքին ու համակարգչիս word ֆայլում գրանցեցի իմ զանգվածը: Իմ զանգվածը 27կգ 500գ է(գրիք քո զանգվածը): Այնուհետև կշռվեցի նաև ուսապարկով: Որից հետո գրանցեցի արդյունքը՝ 31կգ 100գ (գրիք ընդհանուր զանգվածը):

Պայուսակիս զանգվածը գտնելու համար.

$$31\text{կգ } 100\text{գ} - 27\text{կգ } 500\text{գ} = 3\text{ կգ } 600\text{գ}$$


Ես պարզեցի, որ իմ պայուսակը կշռում է 3 կգ 600գ:

Պատասխան՝ 3 կգ 600գ

Մաթեմատիկայի ստուգատեսի առաջին և երկրորդ կանգառները՝ երկարության չափումներ, պարագծի հաշվում ու մակերսի հաշվում

Այսօր մենք միջին դպրոցի սովորողների և ընկեր Գրետայի հետ կատարեցինք մաթեմատիկայի ստուգատեսի առաջին և երկրորդ կանգառները՝ երկարության չափումներ, պարագծի հաշվում ու մակերսի հաշվում: Սկզբում մենք կարդոնե թղթի վրա գծեցինք երկրաչափական տարբեր պատկերներ, որից հետո կտրեցինք և հաշվեցինք դրանց պարագիծն ու մակերեսը:

Ես ընտրեցի եռանկյուն (գրեք ձեր ընտրած պատկերի անվանումը)և չափերիզի միջոցով չափեցի եռանկյան կողմերը՝ 39 սմ 1մմ , 21 սմ , 20 սմ 5 մմ: Պարագիծը նրա կողմերի երկարությունների գումարն է՝
 $39\text{ սմ } 1\text{մմ} + 21\text{ սմ} + 20\text{ սմ } 5\text{ մմ} = 80\text{ սմ } 6\text{ մմ}$:



Ես ընտրեցի 2 հավասար եռանկյուններից բաղկացած պատկեր, որոնք միասին կապնելով ստանում էի 1 ուղղանկյուն (գրեք ձեր ընտրած պատկերի անվանումը) չափեցի ստացված ուղղանկյան կողմերը և հաշվեցի մակերեսը: Ստացված ուղղանկյան կողմերն էին՝ 40 սմ և 60 սմ:

Մակերեսը՝ $40 \cdot 60 = 2400$ սմ քառ.

Paint-ով նկարեք ձեր ընտրած բազմանկյան պատկերները:

